<< Աբովյանի կրթահամալիր>> ՊՈԱԿ-ի 2021-2022 ուստարվա 12-րդ դասարանի դասղեկի կատարած աշխատանքների

Հաշվետվություն

2021-2022 ուստարվա 12-րդ դասարանի արակերտների թիվը տարվա սկզբում եղել է 22, 1-ին կիսամյակի վերջում՝ 21, 2-րդ կիսամյակում՝ դարձյալ 22, որից՝ 10-ը աղջիկ, 12՝ տղա:

22 աշակերտից 2 աշակերտ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն/Սարգսյան Լիլիթ,Այանյան Ալվարդ/,6 աշակերտ՝ հարվածային, չառաջադիմող աշակերտ չունենք: Ընդհանուր առաջադիմությունը 100 տոկոս, որակական առաջադիմությունը՝ 36, բաց թողած դասաժամը՝ 1186:

Ուստարվա ընթացքում առաջնորդվել եմ դասղեկի աշխատանքային տարեկան ծրագրով:Ըստ տնօրինության կազմած ժամանակացույցի՝ կատարվել է դասագրքերի բաշխում,կահավորվել է դասասենյակը:

Տնօրինության կողմից կազմած ժամանակացույցով անցկացվել են ծնողական ժողովներ,բացահայտվել են սոցիալապես անապահով աշակերտները,որանց հատկացվել են դասագրքերի վճարի զեղչեր:

Եվ՛ աշակերտներին , և՛ ծնողներին ծանոթացրել եմ իրենց պարտականություններին և իրավունքներին: Վերահսկողություն եմ սահմանել սանիտարահիգենիկ պայմանների կանոնների պահպանմանը: Ամենօրյա ուշադրության կենտրոնում եմ պահել աշակերտների հաճախումները, ուշացումները, բացակայությունները, որոնք քննարկվել են դասղեկի ժամին:Ապահովել եմ աշակերտների կապը գրադարանի հետ:

Յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթվա ուրբաթ օրը անցկացվել է ծնող-ուսուցիչ հանդիպում: Ծնողներին և աշակերտներին ծանոթացրել եմ պետական ավարտական քննությունների կարգին:

Տարբեր տոների հետ կապված՝ ձևավորվել է դասարանը, պատրաստվել են պատի թերթեր:

Մշտական ուշադրության կենտրոնում եմ պահել աշակերտների փոխհարաբերությունները,փորձել եմ սովորողների մոտ ձևավորել ճիշտ վերաբերմունք քննադատության և ինքնաքննադատության վերաբերյալ:

Անցկացվել են զրույցներ, քննարկումներ Հայոց բանակի, <<Ս.Սարգիսը երիտասարդության հովանավոր>> թեմաներով,ինչպես նաև՝ Կանանց միջազգային օրվա, Հայոց մեծ եղեռնի, Մայիսյան հերոսամարտերի և այլ թեմաներով:

Անցկացվել են մասնագիտական կողմնորոշման մասին զրույցներ և հանդիպումներ Խ.Ավովյանի անվան համալսարանի և այլ բուհերի դասախոսների հետ:

Ուստարվա վերջում կազմակերպվել և անցկացվել է <<Վերջին դաս>> և <<Վերջին զանգ>> միջոցառումը:

Ըստ ժամանակացույցի՝ պատրաստվել և անցկացվել են պետական ավարտական քննությունները:

Դասղեկ՝ / / Շ.Բաղալյան

27.06.2022թ.